ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ՄԱՅԻՍԻ 27-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը։

Սուրբ պատարագին ներկա էին Վեհափառ Հայրապետը, Կոստանդնուպոլսի Տիեզերական Պատրիարք Նորին Սրբություն Ամենապատիվ Տ. Աթենագորասի ներկայացուցիչ գերաշնորհ Տ. Էմիլիանոս եպիսկոպոսը, ինչպես նաև սփյուռքահայ բազմաթիվ ուխտավորներ։

***

ՄԱՅԻՍԻ 31-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, «Համբարձումն Քրիստոսի»։ Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Մկրտիչ ավագ քահանա Մկրտչյանը։

Հավարտ սուրբ պատարագի, Իշման Ս. Սեղանի առջև կատարվեց հանդիսավոր մաղթանք, ի հիշատակ Հայրապետական Աթոռի Սսից Ս. Էջմիածին փոխադրության։ Մաղթանքի արարողության նախագահում էր Մայր Տաճարի լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսը։

***

ՀՈՒՆԻՍԻ 3-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, «Երկրորդ Ծաղկազարդ»։ Մայր Տաճարում պատարագեց գերաշնորհ Տ. Սերովբե եպիսկոպոս Մանուկյանը։ «Հայր մերս»-ից առաջ սրբազան հայրը քարոզեց, վեր հանելով սուրբ թարգմանիչ վարդապետների եկեղեցական-ազգային գործունեությունը և Ս. Մեսրոպ Մաշտոցի կատարած անգնահատելի դերը հայ գրի ստեղծման և հայ դպրության սկզբնավորության գործում։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՀՈՒՆԻՍԻ 6-ԻՆ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, գերաշնորհ Տ. Սերովբե եպիսկոպոս Մանուկյանը, հրաժեշտ առնելով Վեհափառ Հայրապետից և Մայր Աթոռից, մեկնեց Թրիլիսի, ճանապարհորդվելու համար Փարիզ։ Սրբազան հոր ընկերակցում էր հոգեշնորհ Տ. Վահան վարդապետ Տերյանը։

***

ՀՈՒՆԻՍԻ 17-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Ներսես աբեղա Պոզապալյանը։

***

ՀՈՒՆԻՍԻ 18-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, «տոն սրբոց կուսանացն Հռիփսիմեանց»։ Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարությանը։

***

ՀՈՒՆԻՍԻ 19-ԻՆ, ԵՐԵՔՇԱԲԹԻ, «տոն սրբոց կուսանացն Գայիանեանց»։ Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Հակոբ քահանա Հակոբյանը։

***

ՀՈՒՆԻՍԻ 21-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, «տոն Սրբոյն Յովհաննու Կարապետին և Աթանագինեայ եպիսկոպոսին»։ Շողակաթի վանքում պատարագեց արժանապատիվ Տ. Մկրտիչ ավագ քահանա Մկրտչյանը։

***

ՀՈՒՆԻՍԻ 23-ԻՆ, ՇԱԲԱԹ, «տոն Սրբոյն Գրիգոր Լուսաւորչին մերոյ ելից ի վիրապէն»։ Մայր Տաճարում, Իշման Ս. Սեղանի վրա, պատարագեց հոգեշնորհ Տ. Հարությունվարդապետ Մատենչյանը։

***

ՀՈՒՆԻՍԻ 24-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, «տոն Կաթուղիկէ Ս. Էջմիածնի»։ Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը, ընա-

բան ունենալով «Հոգի Տեառն ի վերայ իմ. վասն որոյ էօծ իսկ զիս»։

Հավարտ սուրբ պատարագի, Իշխան Ս. Սնդանի առաջ, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, կատարվեց Հայրապետական մաղթանք։

***

ՀՈՒՆԻՍԻ 25-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, Հոգևոր Ճեմարանի ուսանողությունը, վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոսի առաջնորդությամբ և դասախոսական կազմի մասնակցությամբ, մեկնեց Հաղարծնի վանքը։

Ընդօրյա հանգստից հետո, զբոսարշավի մասնակիցները վերադարձան կազդուրված և գոհունակ։

ՀՈՒՆԻՍԻ 27-ԻՆ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, Վեհափառ Հայրապետը, ընկերակցությամբ հոգեշնորհ Տ. Ներսես աբեղա Պողոսյանի և բարեշնորհ Պետրոս սարկավագ Բերբերյանի, այցելեց տաղանդաշատ քանդակագործ Արա Սարգսյանի ծննդյան 60-ամյակի առթիվ Երևանում բացված ցուցահանդեսը։

***

ՀՈՒՆԻՍԻ 29-ԻՆ, ՈՒՐԲԱԹ, Վեհարանում գումարվեց Մայր Աթոռին առընթեր ճարտարապետների հանձնաժողովի հերթական նիստը, Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ։ Նիստում քննարկվեցին վանքի արևելյան գլխավոր դարբասի նոր կառուցման և Տրդատի դռան վերանորոգման հարցերը։